Տեղեկատվական ամփոփագիր			
Ավանդի հիմնական պայմանները			
Ավանդատեսակի գործողության ժամկետն է		01.06.18 – վերջնաժամկետ չի սահմանվում	
Ավանդի ներդրման արժույթը		ՀՀ դրամ	
Ավանդի ներդրման նվազագույն գումարը		100,000	
Ավանդի ներդրման ժամկետը	**Տոկոսների վճարման կարգը**	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն՝ տոկոսագումարների տարեկան ստացման դեպքում
Առավելագույնը 6570 օր (18 տարի)	**ժամկետի վերջում**	9.5%*	9.5%*
*Տարեկան տոկոսադրույքը կարող է վերանայվել Բանկի կողմից յուրաքանչյուր տարի:			
Ավանդի առավելագույն գումարը		100,000,000	
Ավանդի տեսակը		• Ավանդը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, ովքեր հանդիսանում են պետության կողմից «դրամագլուխ» ստացած երեխայի ծնողը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալը: • Պարտադիր պայման է ավանդը երեխայի անունով ձևակերպելը, իսկ ծնողին կամ խնամակալին՝ որպես երրորդ անձ:	
Գումարի համալրման հնարավորություն՝ այո Տոկոսների կապիտալացում չի իրականացվում:			
Մասնակի հետկանչման հնարավորություն՝ այո, սակայն միայն հետևյալ նպատակների համար. 1. երեխայի ծնողի կամ խնամակալի հիփոթեքային վարկի վճարման համար 2. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ուսումնական հաստատության վարձավճարի համար /երեխայի ընտանիքի անդամի/ 3. երեխայի ընտանիքի անդամի առողջության ապահովագրության վճարի համար:			
Ավանդը կարող է ամբողջությամբ հետկանչվել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գրավոր պահանջով:			
Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր՝ UNIPAY կոմունալ վճարումների միասնական համակարգի քարտ:			

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սակագներ և տուժանքներ

1. Ժամկետային ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Եթե հաճախորդը «Յունիբանկ» ԲԲԸ-ում չունի բանկային հաշիվներ, ապա դրամային ժամկետային ավանդ ներդնող ավանդատուի համար

Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում բացի արտարժութային բանկային հաշվից, բացվում է նաև ՀՀ դրամով բանկային հաշիվ:

2. Ընտանեկան դրամագլխի գումարների ստացման համար բացվող հաշիվների համար սպասարկման վճար չի գանձվում:

Ավանդային հաշվի քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքների չի իրականացրել:

3. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում.

ա/ ավանդի գումարից գանձվում են արդեն իսկ վճարված տոկոսագումարները, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների ամենամսյա վճարում,

բ/ կատարվում է տոկոսների վերահաշվարկ ավանդը բանկում ներդրած փաստացի ժամանակահատվածի համար բանկի կողմից սահմանված ցպահանջ ավանդի տոկոսադրույքով:

4. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է ավանդի պայմանագրով սահմանված պայմաններով: Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը կամ այն երկարաձգել պայմանագրում սահմանված պայմանների համաձայն, ապա ժամկետային ավանդը համարվում է երկարաձգված՝ բանկի կողմից սահմանված ցպահանջ ավանդի պայմաններով:

Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ «Յունիբանկ» ԲԲԸ Վարչության կողմից հաստատված դրույքների և սակագների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշիվների սպասարկման պայմանագրով:

5. Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

6. Ավանդային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են Անվանական տոկոսադրույքի հիման վրա:

7. Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը ավանդատուի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում: